

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«09» հոկտեմբեր 2019թ. թիվ

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 15 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի 6-րդ և 7-րդ կետերը, հաշվի առնելով Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2019թ. հոկտեմբերի 9-ի նիստի թիվ _____ արձանագրությունը՝ Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 15 որոշմամբ հաստատված «Նույն զինծառայողի կապակցությամբ հատուցման դեպքի փոփոխության պարագայում վճարման ենթակա հատուցման գումարի վերահաշվարկման կարգում»՝ (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

Կարգի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

7. Վերահաշվարկված չափերով ամսական հավասար վճարների կատարումը սկսվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից տրամադրված՝ զինծառայողին հաշմանդամ ճանաչելու մասին վարչական ակտի քաղվածքի հիման վրա, որի «Փորձաքննությունը

կատարվել է» տողում նշված առաջին ամսաթիվը հաշմանդամություն սահմանելու օրն է: Ամսական հավասար վճարների կատարումը սկսվում է հաշմանդամության սահմանման օրվանից և շարունակվում մինչև՝

1) հատուցման գումարի վճարման 20 տարին լրանալը (ընդ որում հատուցման գումարի վճարման 20 տարիների հաշվարկը սկսված է համարվում այն ամսվանից ներառյալ, երբ տվյալ զինծառայողը (իսկ զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելու պարագայում՝ Օրենքով նախատեսված այլ անձինք) առաջին անգամ ճանաչվել է շահառու և այդ հիմքով ստացել է առաջին ամսական հավասարաչափ վճարը), կամ

2) վերահաշվարկ կատարելուց հետո նույն զինծառայողի կապակցությամբ հատուցման դեպքի փոփոխության հետևանքով հատուցման գումարի նոր վերահաշվարկ կատարելու ամիսը ներառյալ:

**Զինծառայողների կյանքին կամ առողջությանը
պատճառված վնասների հատուցման
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ՝**

Դավիթ Տոնոյան